«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մարտի 2018 թվականի

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2017 թվականի գործունեության արդյունքների և 2018 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2017 թվականի գործունեության արդյունքները և 2018 թվականի խնդիրները»** հարցը (զեկուցող՝ կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնն ավարտին է հասցրել 2016 թ. հաստատված հետազոտական 1 թեմայի հրատարակման և 3-ի հրապարակայնացման աշխատանքները: Շարունակվել են նաև կենտրոնի կողմից 6 խորագրերով ամենամսյա ու եռամսյակային վիճակագրական-վերլուծական հաշվետվությունների հրապարակման աշխատանքները: Հրատարակված «Ամբերդ» մատենաշարն առաքվել է համալսարանում հաստատված կարգով առաքման ենթակա բոլոր կազմակերպություններին: Կենտրոնն իրականացված հետազոտությունների արդյունքների հրապարակայնացման ուղղությամբ իրականացրել է հավելյալ հասցեական աշխատանքներ: Մասնավորապես՝ հետազոտական թեմաների կատարման ընթացքում ձեռք բերված արդյունքների հիման վրա մշակված վերլուծական ակնարկները զետեղվել են համալսարանի կայքում և կենտրոնի ֆեյսբուքյան էջում՝ ապահովելով դիտումների մեծ քանակ, «Նասդաք ՕԷՄԵՔՍ Արմենիա» ՓԲԸ պատվերով իրականացված «Կենտրոնական գործընկերոջ ինստիտուտի ներդրման հնարավորությունները և նախընտրելի մոդելը ՀՀ-ում» թեմայով հետազոտության արդյունքներն առաքվել են պատվիրատուին, որի հավանությանն արժանանալուց հետո կազմակերպվել են մասնագիտական քննարկումներ տարբեր շահառուների ներգրավմամբ, գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրմանն առնչվող հետազոտության շրջանակներում շահառուների հետ կազմակերպվել են մի շարք կլոր սեղաններ: Կենտրոնի աշխատակիցներն ակտիվ են եղել ՋԼՄ-ների հետ կատարվող աշխատանքներում. մասնավորապես՝ կատարված հետազոտությունների արդյունքներին առնչվող լուսաբանումներ են կազմակերպվել զանգվածային լրատվության միջոցներով, մեկնաբանություններ են տրվել տնտեսագիտական ու գործարար հանրույթին ուղղված որոշ մասնագիտացված էլեկտրոնային կայքերին, կենտրոնի հետազոտողները ակտիվ մասնակցություն են ունեցել տարբեր մամուլի ակումբների կազմակերպած քննարկումներին:

Կենտրոնը շարունակել է արտաքին շահակիցներին հաշվետվողականության ավանդույթը: Մշակվել և համալսարանի կայքում երեք լեզուներով զետեղել է նախորդ տարվա գործունեության արդյունքներն ու հրապարակումների համառոտագրերն արտացոլող հաշվետվությունը:

2017 թվականին կենտրոնի 3 հետազոտական ծրագրերում ներգրավված է եղել 9 հաստիքային աշխատակից (2-ը՝ վարչական, 7-ը՝ հետազոտող): Նույն ժամանակահատվածում ձևավորված 2 հետազոտական խմբերում իբրև կատարող փորձագետներ ներգրավված են եղել բուհի 5 դասախոս (1-ը՝ հասարակական հիմունքներով), 3 վարչական աշխատակից, 11 ուսանող և ասպիրանտ:

Հաշվետու տարում կենտրոնի անձնակազմը և կատարող փորձագետները հրատարակել են 32 գիտական հոդված (12-ը՝ միջազգային գիտական ամսագրերում), 4 համալիր հետազոտության հաշվետվություն, 31 վերլուծական-վիճակագրական հաշվետվություն, 15 վերլուծական ակնարկ, 2 մենագրություն (1-ը՝ կոլեկտիվ), 1 դասախոսություն: Կենտրոնի հաստիքային աշխատակիցները մասնակցել են 22 գիտաժողովի (3-ը՝ արտերկրում), 2 միջազգային աշխատաժողովի, ՀՀ ԱԺ-ում կազմակերպված 7 աշխատանքային քննարկման, 2 խորհրդարանական լսումների, Արցախում կազմակերպված 1 աշխատաժողովի, «Էրասմուս+»-ի 3 փոխանակման ծրագրի:

2017 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների ծրագրին աջակցության շրջանակներում կենտրոնը, համալսարանի տարբեր ստորաբաժանումների հետ համագործակցելով, բուհում իրականացրել է ուսանողների, դասախոսների, ուսումնաօժանդակ անձնակազմի և վարչական ստորաբաժանումների ղեկավարների 7 հարցումներ, շուրջ 3000 ռեսպոնդենտների մասնակցությամբ: Իրականացվել են ՀՀ աշխատաշուկայի և կրթական շուկայի համալիր հետազոտություններ, ամփոփվել են արտերկրի կրթական հաստատությունների մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բենչմարքինգի արդյունքները, որոնք տրամադրվել են մասնագիտական ամբիոններին՝ մշակված ՄԿԾ-ների տեղեկատվական հենքը հարստացնելու համար:

2017 թվականին կենտրոնը պետական գնումների համակարգում մասնակցել է գնանշման 1 մրցույթի և հաղթող ճանաչվելով, «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է «ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության և երկարաժամկետ զարգացման ծրագրի փաստաթղթի ստեղծման» աշխատանքների կատարման պայմանագիր:

2017 թվականին կենտրոնը համագործակցության հուշագիր է ստորագրել ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետ՝ դառնալով վերջինի պաշտոնական գիտական խորհրդատուն: Հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակներում կենտրոնը փորձաքննության է ենթարկել և համապատասխան առաջարկությունների փաթեթ մշակել ոլորտային նախարարությունների իրականացրած 2 համալիր հետազոտության, 1 միջազգային պայմանագրի, 1 միջազգային մոդելային օրենքի նախագծի և 7 օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ:

Նման ակտիվությունը, ինչպես նաև հանրային քաղաքականության բնագավառում «Ամբերդ» կենտրոնի մասնագիտացումը նպաստել են, որ կենտրոնը հայտնվի արտերկրի առաջատար հետազոտական կենտրոնների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես՝ 2018 թվականին «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, իբրև բուհական ուղեղային կենտրոն, ներգրավվել է ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի ուղեղային կենտրոնների հեղինակավոր համաշխարհային վարկանիշային զեկույցում «Կենտրոնական Ասիայի լավագույն ուղեղային

կենտրոններ» բաժնի շուրջ 200 համանման հաստատությունների շարքում՝ զբաղեցնելով 65-րդ տեղը: Հայաստանի համալսարանական ուղեղային կենտրոններից լավագույնների շարքում ընդգրկվել են միայն Հայաստանի ամերիկյան համալսարանի Քաղաքականության վերլուծության Թրփանճյան կենտրոնը (23-րդ տեղ) և «Ամբերդ» հետազոտական կենտրոնը:

Կենտրոնում հետևողական աշխատանքներ են իրականացվել գործունեության միջազգայնացման և միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ: 2017 թվականին կենտրոնը համագործակցության համաձայնագիր է ստորագրել արտերկրի 2 հետազոտական կառույցի հետ: Համալսարանի արտաքին կապերի բաժնի հետ համագործակցելով, կենտրոնը ներգրավվել է ԵՊՀ կողմից մշակված և «Էրասմուս+»-ի դրամաշնորհի հայցմանը ներկայացված 1 ծրագրում:

Միաժամանակ, գիտական խորհուրդն արձանագրում է՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Այսպես՝

- որոշակի խնդիրներով մասնագիտացած փորձագետների շրջանակի ընդլայնման դանդաղ ընթացքը,
- ամբիոններ-կենտրոն-գիտաուսումնական լաբորատորիաներ արդյունավետ համագործակցության բացակայությունը,
- արտաքին շահառուների հետ համագործակցության և արտերկրի գործընկերների շրջանակի ընդլայնման դանդաղ ընթացքը,
- հետազոտությունների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ոչ մեծ թիվը,
- հետազոտական արդյունքների առևտրայնացման ոչ բավարար մակարդակը,
- իրականացված հետազոտությունների արդյունքների՝ օտար լեզվով հասանելիության ապահովման դանդաղ ընթացքը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2017 թվականի գործունեության արդյունքները գնահատել բավարար**:

2. **Հանձնարարել «Ամբերդ» հետազոտական կենտրոնին.**
   1) դիտարկել կենտրոնի հետազոտական ծրագրերում ամբիոններից կատարող փորձագետների ներգրավման հնարավորությունները և մշակել կատարող փորձագետների ներգրավման համապատասխան կանոնակարգ՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից կենտրոնի հետ համագործակցող փորձագետների կայուն շրջանակի ձևավորման համար.
   2) ակտիվորեն մասնակցել տեղական և արտերկրի դրամաշնորհային մրցույթներին.
   3) ներգրավել մասնավոր հատվածից հետազոտական պատվերներ.
   4) ընդլայնել արտերկրի հետազոտական կենտրոնների հետ համագործակցությունը, դրանց հետ համատեղ իրականացնել հետազոտություններ և հրապարակումներ, միասին մասնակցել տեղական ու միջազգային

դրամաշնորհների մրցույթներին, ինչպես նաև իրականացնել համատեղ գիտական միջոցառումներ.

5) դիտարկել կենտրոնի կողմից վճարովի հիմունքներով թրեյնինգի ծրագրերի իրականացման և ամառային դպրոցների կազմակերպման նպատակահարմարությունը.
6) վերլուծել կենտրոնի կողմից վճարովի հիմունքներով խորհրդատվական և փորձագիտական ծառայությունների մատուցման հնարավորությունը.
7) դիտարկել կենտրոնի գործող հետազոտական ծրագրերի և ներքին կառուցվածքի վերակազմակերպման նպատակահարմարությունը:

3. 2018 թ. առաջնահերթ խնդիրներ համարել.

1) արտերկրի առաջատար ուղեղային կենտրոններին առավել բնորոշ կազմակերպական կառուցվածքի ձևավորումը.
2) ամբիոններից կատարող փորձագետների ներգրավման և կենտրոնի հետ կայուն համագործակցող փորձագետների խմբի ձևավորման համար անհրաժեշտ կանոնակարգերի մշակումը.
3) կենտրոնի գործունեության ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումը.
4) արտաքին դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերին կենտրոնի մասնակցության ընդլայնումը.
5) կենտրոնի գործընկերների շրջանակի ընդլայնումը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ռեկտոր Կ.Լ.Աթոյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

2018 թ. մարտի 5
Երևան